ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արագածոտնի մարզի «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի **դաստիարակի (0,5 դրույք)** թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորում ու հարցազրույց: Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կողմից կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր հայտատուի հետ հարցազրույցն անցկացվելու է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրապարակված հոդվածների ցուցակը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի նշանակած լիազոր անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ ու վերադարձնում բնօրինակները: Եթե փաստաթղթերի ներկայացված փաթեթն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաթեթը:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 23-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. դեկտեմբերի 29-ին՝ ժամը 11:00-ին**,

«Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գ. Լուսակն,4-րդ փ. թիվ 33/2:
Հեռախոս՝ 098692530: